

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան . . . 2.60

Վեցամսեայ . . . 1.50

ԿԱՆԵԻԿ

Մանուցման արդր
20 ամսերով



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՊԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՐԵՆ ԶՈՒՆՔԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Redaction du journal

„le vounk“

VARNA (Bulg.)

Редакция

НАВѢСТНИКЪ

Ирвунк

ВАРНА

Գրութեանը կու լին
տրոսիր

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր ներկայ տարեշրջանի տաս-
ներորդ ամիսն ալ լրանալուն առ-
թիւ կը վերջիցենք ցարդ չը
վճարող մեր բաժանորդներուն որ ի-
րենց պարտքը վճարել փութան :
Նոյեմբերէ սկսեալ ալ թերթ չպի-
տի զրկենք մեր այն բաժանորդ-
ներուն որոնք արդէն մէկ տարե-
կանէ աւելի կը պարտին մեզ : Այս
պիտիներու անունները ստիպուած
պիտի ըլլանք հրատարակել նոյեմ.
13 էն յետոյ :

ՆՊԱՍՏԻ ԳՈՐԾԸ

Ֆրանսայի արտաքին գոր-
ծոց նախարար Տ. Տէլբաւէն հոկտ.
18 թուակիր նամակաւ մը իմա-
ցուցած էր Բրո Արմէնիայ յի խմ-
բագիրներուն, թէ վանի ֆրան-
սական դեր-հիւպատոսին զրկած
է 30,000 ֆր. իւ միւս 5,166 ֆր. ի
գումարները որոնք վեհաձեռն
նախարարներու կողմէ յատկաց-
ւած էին վերջին կոտորածներուն
զոհուող Սասունի և Մշոյ գաշ-
տի հայ ընտանիքներուն :

Նախարարի նամակին կցուած
էր հիւպատոսին մէկ տեղեկա-
գիրը, որով նա կը բացատրէր
այն միջոցները զորս ինք ձեռք
պիտի առնէր որայդ գումարներու
բաշխումը ամենայն խոհականու-
թեամբ և բազմալի ապահովու-
թեամբ կատարուի : Հիւպատոսը
Տ. Ռոպէն, կը խնդրէր նաև թէ
«փոքրիկ գումար մը յատկացու-
էր այդ զրկուածէն վանի այն
դժբաղդ Հայերուն բաշխելու հա-
մար, որոնք կողոպտուած են օ-
գոստոս 31 ի և սեպտ. 1 ի և 2 ի
դէպքերուն » : Ֆրանսական դեր-
հիւպատոսին խորհուրդ տրուե-
ցաւ թէ կրնար 2000 ֆր. ի գու-
մար մը բաժին հանել վանի Հա-
յերուն :

Բրո Արմէնիայի խմբագրու-
թիւնը ստացած է 2000 ֆր. ի
նոր գումար մը, զոր անմիջա-
պէս պիտի յանձնէ արտաքին
գործոց նախարարին, նաև Լէյ-

զէնի Հայերուն 50 ֆր. հանգա-
նակութիւնը :

Այս տեղեկութիւնները տալէ
յետոյ Բրո Արմէնիայի Պատ. խմ-
բագրութիւնը կաւելցնէ հետեւ-
եալ տողերը :

«Բայց այս կարևոր գումարնե-
րը դեռ անբաւական են : Պէտք
չէ մոռնալ թէ 42 գիւղեր աւեր-
ուած են, 7771 արդ ապանւում
և թէ 8854 ուղ մնացող Սասուն-
ցիները ծայրայեղ թշուառու-
թեան մէջ կը գտնուին, առանց
ապաստանի—2769 տղաներ հրկի-
ւած—առանց ապրուստի, 16773
կոյր, 80,075 ոչխարներ յափշտա-
կան են 14,018 հեքտոլիտր արմը-
տիք փախած են, առանց հաշուելու
կորուստը շարժական գույքերու
որ կը հասնի 35,783 օմ. լի-
րայի, շուրջ 720,000 ֆր. »

Տառապող Հայոց համար
կազմուած Նպաստի Յանձնախում-
բը կը բազմապէս հետեւեալ անձ
նաւորութիւններէ :

Տ. Տ. Պէւթըլ, Է. Լալիս,
Սիւլի-Բուրուօ, Ֆրանսական Ա-
կադէմիայի անդամ, Միշէլ Պէտալ
Անատոլ Լըռուա-Պոլիէ, Կաճառի
անդամ, Ա. Պրիան, Տընի Գոշէն,
տէխնիկական տը Գոնթեման, Ժան
Ժոնէս, Ապպա Լըմիւ, Ֆրանսիս
տը Բուէսանէ, Կ. Ռուանէ երես-
փոխան, Վիքթոր Պէռու, Բիէն
Դիյառ :

Հանգանակութեանց արդիւն-
քը կրնան զրկուիլ սա հասցէին

Տ. Բիէն Դիյառ. 10 փողոց
Նոյէք ԲԱՐԻԶ (17)

ՍՈՒՇԻ ԵՒ ՍԱՍՈՒՆԻ
ԽԺԴԺՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(ՊԱՇՏՈՆԱԿԱՆ)

Մուշի Հայոց առաջնորդը ցու-
ցակ մը զրկած է Կ. Պոլսոյ Հա-
յոց պատրիարքարանը Սուլթա-
նի կառավարութեան գործած
խժդժութեանց մասին :

Մենք նոյնութեամբ կ'արտա-
տպենք այդ մանրամասն ցու-

ցակը

1904 յունվար 23 — Մուշի մէջ
ֆեռայի ներ կան ըսելով ոստի-
կաններ, թուրքեր եւ զինուոր
ներ կը յարձակին առաւօտեան
ժամը 3 ին Հոնանի գիւղերուն
վրայ : Ժողովուրդը սարսափա-
հար կըլլայ : Այդ արիւնարբու
խուժանը յարձակեցաւ տուններուն
վրայ, 21 է աւելի կիներ բռն-
բարութեան, 2 այր և 4 տղաք
հրացանի բռնութեան : Ժողո-
վուրդը ցրուեցաւ, տուններուն և
եկեղեցիներուն ինչքերը կողոպ-
տուեցան, 500 է աւելի անձեր
ծայրայեղ թշուառութեան մատ-
նուեցան : Նիւթական քիւսը 60
կամ 70,000 զրչ ի կը հասնի :

1904 յունվար 29 — Սէյտանցի
Մօզիկ ֆաշա ըստած քիւրաը 5
ընկերներով կը յարձակի 4 հա-
յերու վրայ որոնց կընկերանար
նոր հարս մը, Գեռատի կիներ
կը բռնաբարուի և այնօրը կըս-
պանուի միասին գտնուողներուն
հետ :

Մարտ 14—Նասիպ և Սալէհ
անունով երկու շէյխեր կը գըր-
գռեն Մուշի Բիւրտերը հայոց
դէմ : Զարհուրելի յարձակումը
չուշացաւ : Մկր վարդապետն,
Աւետիս Սերաբեան, իր 5 տարե-
կան որդին, Աւետիս քահանան
և Մուրատ Մէլիքեան վիր. տը-
րուեցան : Ալ աւելի զոհեր պիտի
ըլլային եթէ Հայերը նախազ-
գուշութիւնը չունենային իրենց
տուններուն մէջ քաշուելու և
գուռները գցելու :

Մարտ 18—Ոստիկան մը իր
30 հեծեալներով կերթայ Միւս-
վո գիւղը, իր մարդերէն Հըշ
և Համօ կը մահնեն Զադան Հարս-
եանի տունը և անոր յղի կինը
Լուսիկը կը բռնաբարեն :

Մարտ 22 — Խալպեանցի Ա-
ռաքել տէր Աւետիսեան սպան-
նուեցաւ կէսօրէն յետոյ ժամը
5 ին Խալի—Տահապատէ Մէհմէտ
Սէլիմէն, որ բարեկամութիւն
կեղծելով անոր ընկերացիներ էր
Հէրկերտ գիւղին մօտ :

Ապրիլ 3 — Ոստիկանապետ մը,
տուրք հաւաքելու պատրուա-
կով, գոմի մը մէջ կը հաւաքէ

Օրկնոց գիւղի դեռատի կիներ
ըր, զանոնք կանապատէ, ա-
նոնց բերանները բանալ կու-
տայ ու մէջը կը թքնէ և աղբ
կը լեցնէ : զանոնք կը շարչա-
րէ, որոնցմէ մէկը յղի ըլլա-
լով կը վիժէ :

Ապրիլ 9 — Շէրիքցի խուլ և
համր Խարայէլ Մէլքոնեանը Բիւր
տերը բռնեցին Հոնան և Սոհ-
գոմ գիւղերուն մէջտեղը ու ա-
նոր բերանը ականջները եւ
աչքերը ցեխ լեցնելով սպան-
նեցին :

Ապրիլ 10 — Ալբանի գիւղա-
պետը Յակոբ Պոլոսեան իր ար-
տերը դաջած ատեն Բիւրտերը
սպաննեցին հրացանի գնդակ-
ներով :

Ապրիլ 21 — Զօրքերը ֆեռայի
ներ գտնելու պատրուակով
Բերդեկի վրայ յարձակեցան :
Յակոբ Յովհանեան, Մէլքոն Կը-
ռօեան և Նուրի Սարգիսեան
տանամեայ նորատի աղջիկը
հրացանի բռնեցին : Մէլքի Շահ-
նաբեան անուն ութսուն ամեայ
պառաւը քստմնելի տանջանք-
ներու տակ սպաննեցին :

Կիկօ Տօէեան, Մարտ Մա-
թօսեան, Օրապիտի Անկրիտեան
վեցամեայ Կարեկ Մկրտեան
սպաննուեցան սոսկալի տան-
ջանքներու տակ : Յաջորդաբար
բռնաբարութեան Մարիամ Հա-
լեան, Մագօ Մաթոսեան, ձէ-
վահիր Աւետիսեան, 25 ամեայ
դեռատի կինը, Դավրէն, Հու-
միք Գառութեան, Խաչօ Գասպար-
եան : Գիւղացիներուն ինչքերը
կողոպտուեցան և 19 տուններ
այրեցան. կարօտեալներուն թի-
ւը 181 է :

Ապրիլ 29 — Երեք խնուզցի
թուրքեր Սասունէ վերագարձ-
նուն առեւանգեցին երիտասարդ
կին մը Մուգօ անուանեալ Ար-
վարեճցի :

Ապրիլ 25 — Գեռատի գեղու-
հի մը Համէ բռնաբարութեամբ
զինուորներէն ձորակի մը մէջ
Մուշէն կէս ժամ հեռու :

Մայիս 4 — Սուլթաքցի Յովակի-
մին կինը, իր քոյրը Շուշան և

Սատոյի կինը Վարդէ բռնաբար-
ուեցան կամուրջին մօտ գինուոր-
ներէ յորոնք գիւղին մէջ կը գըտ
նուէին :

Մայիս 5—Ետտ մը զօրքերը և
ոստիկանները, ընդ հրամանաւ
Ահմէտ-պէյի, և քիւրա աշխրէթ-
ներ կը յարձակին Մկրագոմ
գիւղին վրայ : Մ. Պօլսեան, Հէլո
Հազրօեան, Մարտո Սէֆերեան,
փոքր ազլիկ մը Սէլվի, դեռատի
կին մը Մարգարիտ իր 3 տարե-
կան տղուն հետ ախոյճն ալ ան-
անկթօրէն սպաննուեցան : Իգ-
նօ Տօրօեան, Պետօ Վարդանե-
ան և Քիշմիշ Մարգարեան վի-
րաւորուեցան սուլիմնիյալ : Զա-
քար Մխոն, Աբիկ Աղաճանե-
ան ևս գնդակներէ վիրաւորու-
եցան : Խաւարաթ և խաթուն
երկու երիտասարդ կիները վի-
ժեցին : Եկեղեցին կողոպտուեցաւ :
29 տուններ այրեցան և աւարի
արուեցան գիւղացիներու ինչքե-
րը : Մկրագոմի մէջ 448 կարօտ-
եալներ կան :

Մայիս 6—Խաւարաթ երկու
երկրագործ Հայեր, Մէլօ Մկրո-
եան և Միքօ Միքէեան սպանուե-
ցան Քիւրտերէն իրենց արտին
մէջ :

Զինուորական սպան՝ որ Զը-
րոնք կը գտնուէր, խաբէա-
կան պատրուակաւ մը դէպի
լեռը զրիկեց երկու հայ երի-
տասարդներ : միւսոյն ատեն
անոնց ետեւէն արձակեց երեք
Քիւրտեր որ զանոնք սպաննե-
ցին : Նոյն օրը թուրքերը աշ-
րեցին Հաւնիսթի մէջ 5 տու-
ներ և քեցերն տարին 14 կո-
վեր :

—Երեղակցի երկու Հայեր,
Պետրոս և Աւօ Գեորգեան,
սպաննուեցան Շապապ, Բիրուն
և Իւզէր Քիւրտերէն :

Մկրագոմի վրայ Գացող զօր-
քերը յարձակեցան նաև Ալը-
կէլըօնի վրայ ուր անոնք գիւ-
ղին մեծ մասը սպաննեցին :
Նոյն օրը առաւօտուն զինուորներ
ոստիկաններ և Քիւրտեր յարձա-
կեցան Պաֆէրտ գիւղին վրայ :
Պետրոս Հէլեան, Սանճօ Զա-
քարեան և 3 տարեկան Սէլինօ ա-
նուն մանկիկը սպաննուեցան :
Հակալ անուն կինը, 8 տարե-
կան Սահակ Պետրոսեան տղայ
մը սուրի հարուածներով սպան-
նուեցան : Քիւրտեր Մկրոեան անու-
նով 60 տարեկան կինը բռնա-
բարուեցաւ, 2սննօ Կիկօեան և
Միքէ Սանաթ վիժեցին :

(Մնացեալը յաջորդով)

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն

ՇՈՒՄԱ 26 հոկտ. 1904

Ժամանակէ մը ի վեր քաղաքիս
մէջ տիրած անկերպարան վիճակը
կարծեմ բարոյութեան ալ ևս, զի
Շուկացիք ալ քաջ ըմբռնեց իւր

յոռի կացութիւնը և խմացաւ թէ
այդ ընթացքով չպիտի յառաջ եր-
թուի. այլ ընդհակառակը ի կորուստ
պիտի մատնուի, ուստի. որոշուե-
ցաւ ընդհանուր ազգին հաւանու-
թեամբ Նոր Թաղականութիւն ընտ-
րել : Ինչպէս որ կատարուեցաւ ըն-
թացիկ ամսոյս 3—ին նախագահու-
թեամբ Քիւրտեան Արթ. Տէր խո-
րէն աւագ Քանաւոյի, Ընտրողա-
կան ժողովոյ ներկայութեամբ, ըստ
օրինի Սահմանադրութեան և ախը-
տիր մասնակցեցան ընտրութեան տե-
ղացի և թէ գաղմակուն ազգա-
յինք, որով արդիւնքը տեղեկագրուե-
ցաւ ի Պօլսի Ամեն. Սրբազան Պատ-
րիարք Հօր խնդրուելով միանգա-
ման վաւերացումներ, ինչպէս փու-
թացուցածէր տալով հրահանգ որպէս-
զի Գրեանն ալ ընտրուի որ հետեւե-
ալ կերպիւ կազմուեցաւ : Ատենա-
պա մէկ. Միքիճան Յովսէփեան,
Աստիկան Յովհաննէս Քէօ Էտան,
Գանձապալ Գաբրիէլ Մանուկեան,
Խորհրդակցութեամբ Թագաւոր Քարամկրաթի-
կան և Գրիգոր Աւագեան Տնարք :
Այս առթիւ շնորհաւորելով ի-
րենց նուիրական պաշտօններ լիա-
յոյս ենք որ յիշեալ նորակազմ
Պատ. Թաղական անդամք ամեն
կերպով պիտի ջանան պայծառ-
ցնելու իրենց Ս. Եկեղեցին և
Ազգ. երկեսն վարձարանները. առանց
կարեւորութիւն տալու կարգ մը սին
«Երբ—բայ» ներուէն. յաջորդութիւն և
կարողութիւն կը մաղթէ նաև :

ՍՈՒՐԸ

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԷՆ

27 հոկտեմբեր

Պէշիկիշաշի, Երևոյի թաղի ոստիկա-
նապետ Հասան փաշան մեռաւ :

«Համալ» անունեալ Հասանը Ապ-
տիւ Համիթի անթիւ հողին էր և
զօրծաղորդը անոր վատ գործերուն.
Անգրագէտ զինուորայինէ յետոյ.
Նորհիւ իր անհամար ոճի-
ներուն, որոնք իր տիրոջ բարձր զը-
նահանգութիւն կարժանանային, մարա-
ջաբախ ատրիճանին հասաւ :

Աւելի երկար յիշատակութեան մը
պատիւը չպիտի լինի Մուրատ Ն. ի
այս թշուառակուն բանաստեղծին, եր-
տասադէթիւրքերուն և Հայերուն
այս դանձին : Իրեն եղած փառաւոր
յուզարկաւորութիւնն է որ զիս կը
ստիպէ ցաւ ի սիրտ խօսիլ այդ անձին
նկատմամբ : Մահօթ է այն խեղճուկ
ու սրտաճմբկի թաղուած որուն արժա-
նի գատուեցաւ Սուլթան Մուրատը,
մինչդեռ իր բանաստեղծին յուշա-
րկութեանը արուեստը հանդիսաւոր
հանգամանք մը ևս մեծապէս կ'ը-
կարանք մը զոր Ապտիւ Համիթ
միայն կը շնորհէ իր արարածներուն :

Խիստ դարձող պատճառեց մեզ Հա-
սանի յուշարկաւորութեան ներկայ
դանուղ պաշտօնական անձերուն մէջ
տեսնել Լոդի Օսման փաշայի որդին,
Օսմանեան հպատակներուն համար
դարձութիւն ուրիշ պատճառ մըն ալ ե-
ղաւ իմանալ թէ աստիճող ոստիկանա-
պետին մարմինը ամփոփուեցաւ այն
դամբանին մէջ ուր կը հանգչին կար-
մըրաժօրութեամբ խաղաղութիւն փառաւոր ծո-
վակալին ոսկորները :

Ինչ մեծ նախատինք այս հերոսին
յիշատակին :

ՄԵՇԿԵՐԷԹ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈԼԷՐԱՆ

Դարեւթէն կը գրեն թէ քուէրան, որ
չսան օրէ ի վերէ ծագած է հոն. մե-
ծապէս կը ճարակի : Սկիզբները տեղ-
ւոյն բժիշկները տարակարծիք էին
սխալին հանգամանքին նկատմամբ.
անպէս որ հիւանդութիւնը ծագելէն
սասը օր վերջը միայն խոտովանեցան
թէ քուէրա է. Դեպքերու թիւը կը
փոխուի ամէն օր : Վերջին օրերս 7—800ի
բարձրացաւ, որոնց մեծ մասը մահա-
ցու : Մինչև հիմայ պատահած դէպ-
քերը կարելի միջին հաշուով օրական
350 էն 400 հոգի հաշուել ասանց չա-
փազանցութեան : Այս թիւն ալ կո-
տարեկապէս ճիշդ չէ, որովհետեւ հայ
հասարակութեան մէջ պատահած եւ
անոր կողմէ տեղեկագրուած դէպքե-
րու հաշիւին վրայ հիմնուած է : Այդ
հաշիւին համաձայն, մինչև հիմայ եր-
կու շաբաթուան միջոցին Դարեւթի
Հայրեն մէջ պատահած դէպքերու
թիւը 30 ի կը հասնի, եւ այդ ալ
2000 Հայերէ քաղկացած բնակչու-
թեան մը մէջ որուն կէսը քաղաքէն
հեռացած է, քաղաքը ապաստանելու
համար : Ըսել է օրական հազար բը-
նակիչի մէջ երկու դէպք պատահած է :
Այս թիւը համեմատութեան դնելով
Դարեւթի պարսիկ ազգաբնակչութեան
հետ որ 200,000 հոգիէ կը բաղկանայ
օրական 4—6 հարիւր դէպքերու թիւը
ճշմարտութենէ հեռու չերեւիր : Այս
առթիւ պէտք է խոստովանիլ որ հայ
սղգաբնակչութիւնը մեծ խնամք կը
տանի անողջապահութեան և մաք-
րութեան : Հետեւաբար մահերու թիւը
նուազ պէտք է ըլլայ իրենց մէջ : Ինչ
որ ալ ըլլայ այս հիւանդութեան հե-
տեւանքները աղետալի ևս փաճառա-
կանութեան համար : Առեւտրական
ամէն գործ դադարած է : Վաճառատու-
ներուն մեծ մասը գոցուած է : հազիւ
քանի մը պղտիկ խանութպաններ
գործ կ'ընեն, ան ալ շատ հազուադէպ
կերպով :

—Լեւոյն պահուն հասած լուրեր
կ'ըսեն թէ քուէրան աւելի կը ստա-
կանայ : Մահերու թիւը 800 ընցած
է : Երկուսն զոց կը մնայ :

(ԱՐԵՎԵԼԻՔ)

ԾԱՂԿԱՔԱՂ

«Բուսսթի Լիստօք» լրագրի թղթա-
կիցը ներկայ պատերազմին առթիւ հե-
տեւեալ չինական հետաքրքրաշարժ ա-
ռասպել կը հաղորդէ :

«Երբ մեծն Պրահմա աշխարհս կ'ստեղ-
ծէր, մարդը, գիւղացի իր անկարողու-
թեանը ուրիշ կենդանիներու բաղ-
տամամբ, հարցուց իր Աւարիչին, «Ին-
չու մէջ չունեցանք արձուին թեւերը,
առեւծին ու վագրին կզակը, ցու-
լին կոտորչները ու փիղին աղա-
ները : Ինչու մէջ արեւի փոքր
ու աւելի տկար ենք քան փիղը
ու վայրենի ցուլը, ինչու շուէինք
արջին տաքուկ մուշտակը ևս օտ-
պուած ենք զգեստ հագնիլ » :

«Մեծն Պրահման պատասխանեց ա-
նոր : «Ձեզի թեւեր չտուի, որ-
որպէսզի ձեզ կերակրող երկրինե-
րէն վեր չթռչիք : Ձեզի առեւծի
կզակներ, եզի կոտորչներ ու փիղի
աղաներ չտուի, զի մի գուցէ
մէկըմէկ բղթաքէ, ևս մէկըմէկ տ-
տէք : երկրին տիրիւն համար հարկ
չէ որ զուք առեւծէն, վագրէն
ու փիղէն աւելի զօրաւոր ըլլաք.
զուք պէտք չունիք բիրտ ուժի,
որովհետեւ ուրիշ կենդանիներու ու-

նեցածէն աւելի զօրաւոր զէնք մը
տուած եմ ձեզ, մաքուր ու յա-
տակ իմացականութիւն մը որով կըր-
նաք աշխարհին տիրել : Երկրը
որուն բաղադրամբ մարդս աւագի
հատիկ մըն է միայն, չպիտի զլանայ
ձեզ իր բոլոր պարգեւները, ի՞նչ
ուզէք մշակել զայն : Իմացակա-
նութեամբ պիտի կրնաք մէկմէկու
հետ խաղաղութեամբ ու սիրով ապ-
րիլ ևս եղադարաբար իրարու օգնել :
Պատերազմը, նոյն իսկ սոսկ թշնամու-
թիւնը մարդոց միջեւ, անհասկանալի
բան մըն է : Ճարտեցիք հաւատարմ չը
մնացին Պրահմայի պատուէրին, իսկ
Ձինացիք սերտիւ փարած են անոր և
կը վախճան պատերազմէն :

Իտալական մէկ քանի լրագրներ
սա ուշադրութեւն կը հաղորդեն,
թէ անթիւ հեռագրի հնարիչ Մարգրի
նշանուէր է Միացեալ Նահանգներու
նախագահի աղջկան օր : Բուզվէլի

Իտալաւոր գիտնականին փառքը
չատոնց անցած էր Ատլանտան ով-
կիանոսէն անդին ևս որ, Բուզվէլի
նախամեծար համարել է համեստ ե-
լիքաբազէտը բազմաթիւ միլիոնաւե-
րեք, որոնք իր ձեռքը խնդրած էին :

Պերլիէն կը հեռագրեն «Նայէ Ֆը-
րայէ Իրեսէ» լրագրին Հայէի համալ-
սարանի ուսուցչապետ Տ. Խարաթի
գիտական մէկ գիտի մասին : Աւ-
ստըչապետը նշմարած էր, որ եթէ
մատին ծայրով թեթիւ չփէր կողմա-
ցոյցի մը ապակին, այն ատեն մազնի-
սացեալ ասեղը կը շեղէր այն գիւղէն

ուր կը բռնէ զայն երկրային մագնի-
սականութիւնը : Այս երևույթը նշան
մըն է մարդկային մարմինն մագնի-
սական գործիքեան : Ստրագուրկի
յայտնի բնաստ Ա. Պիթէ այս երևույ-
թին պատճառ կը համարի սա, թէ մա-
սի եղունգին ապակին չփուկէն ե-
լիքաբազէտութիւն յառաջ կուգայ :
Սակայն, ասոր դէմ, Խարաթի ուսուց-
չապետը կը պատասխանէ, թէ որպէս
զի մագնիսացեալ ասեղ մը չեղի իւր
գիւղէն, պէտք է առ նուազի 1000
վոլթական մարտկոցի ելեքտրական
հասանք մը, մինչդեռ այս չփուկով
խիստ փոքր քանակութեամբ ելեքտր-
ականութիւն միայն յառաջ կուգայ :
Նոյն լրագրին համեմատ, արդէն
քանի մը գիտնական սկսած են զբա-
ղիլ այս գիտական նորութեամբ :

ԿՐԵՏԷ

Կրէտէի իշխան Եօրկին վերջերս ուղ-
ղած է մեծ պետութեանց յիշատակա-
գիր մը որուն պարունակութիւնը
հետեւեալն է մօտաւորապէս :

Իշխանը յիշելէ յետոյ թէ իր պաշ-
տօնին պայմանաւորով կը լինէր յա-
ռաջիկայ գեկու, 9 ին կը շարունակէ
«Երեք տարի առաջ, հիմակուան պէս
այցելութեան ելայ եւրոպական մը-
քունիքներուն և կառավարութեանց.
ամէն տեղ իրազեկ քաղաքագետները
ճանչցան որ պատերազմէն յետոյ կըր-
կին Կրեաէն աշխարհի ընթացք մը
բռնեց որ արժանի էր ամէն դրօշմար-
կերտացի միշտ առժամանակեայ հա-
մարած են իրերու հիմակուան կացու-
թիւնը : Կրեաացից այժմու պահանջը
ու փափաքը (Յունաստանի հետ միա-
միացումը) նոր չէ Եւրոպայի պետա-
կան անձերուն համար, որովհետեւ

այն արդէն յայտնուած էր ներկայ դրութեան սկզբնաւորութեան աստիճանը մեծ պետութեանց ծովակալները ձեռք առին կղզիին առամանակ-եայ կառավարութիւնը, անոնց ուշադրութիւնը հրաւիրուեցաւ կրկնապէս այս փափաքին վրայ : Եւ այս առթիւ եւս պետութեանց բարդաւորութիւնը կրկնապէս իրենց միտքը փոխած չեն : Զանազան դժուարութիւններու առջեւ ես պարզեցի այս հարցին ամէն փոքրերը : Զեմ քեանք թէ անոնք ինչ պիտի որոշեն, իսկ իմ պատգամս դեռ լինեցած չէ : Կը յուսամ թէ խնդիրը ընդ փոքր լուծուած մը պիտի ստանայ, որովհետեւ կրէտացիք կը սկսին համալսութիւններն կորսնցնելու եւ այլ եւս չպիտի գտնանան խոստովանելով : Թէ ինչ կերպով պիտի լուծուի այս խնդիրը, ոչ եւս եւ ոչ ալ կրէտացիք ընտելինք ստարակուսի : Կղզին պէտք է միանայ յունական թագաւորութեան հետ :

ՍՈՈՂԱՄԱՅՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրիայէն Տ . Կարապետ Գալֆանան մեզ զրկած է տպեալ յայտարարութիւն մը , որով կը ծանուցանէ թէ ծրարագրած է ԱՍՈՂ ՔԱՊԱԶՈՒԹԻՒՆ անունով Գիտական , Բժշկական ու փորձնա—նոգեթանական եւ աւանդական հանդէս մը հրատարակել : Այս նոր հանդէսին նըպատակը կը բացատրէ հետեւեալ տողերով .

Նպատակս հանդէսի միակ նպատակն է .

- 1.— Կուսել տղիտութեան դէմ , ու մասնաւոր անել այն անհատական չարքերն որոնք տղիտութենէն առաջ գալիս են :
- 2.— Զանազան հիւանդութիւններէ մէջ՝ ժառանգականութեան նշանակութիւնն ու սզդեցութիւնները բացատրել ու լուսարանել :
- 3.— Զանազան հիւանդութիւններէ

սկզբնապատճառները մասնաւոր անել ու պարզել :

4.— Ահա՛հեմ կենցաղավարութեան եւ զանազան աննպատակ հանգամանքներէն յառաջ եկած հիւանդութիւններէ տեսնելով որ ցուցադրելու ու պարզելու :

5.— Անհետ կայծուած մի քանի հիւանդութիւններէ մահաբեր հետեւանքները ցուցադրել ու պարզել :

6.— Ընդհանրապէս , զանազան հիւանդութիւններէ պարզ նշաններն ու փոփոխական երեւոյթները մասնաւոր անել :

7.— Պարզօրէն թելադրել ֆիզիկական ու հոգեկան հիւանդութիւններէ բժշկող պայմաններն ու միջոցները :

Մի խօսքով, եռանկեայ հասկնալու նպատակն է մասնաւոր անել այն բոլոր առողջապահական կանոններն ու բժշկական միջոցները որոնցմով մարդ—արարածը կարող է իր մարմինը (իր գործարանները) առողջ պահել ու իր հոգին (ուղեղը) մաքուր ու անվտանգ պահել :

Նպատակս հանդէսի ամէն մէկ համարը պիտի բաղկացած լինի 64 էջերէ :

Առաջին թիւը պիտի լոյս տեսնէ Յունվարի 1-ին :

Հանդէսին բաժանորդագրին է . Եւրպատի համար՝ տարեկան 20 ֆրանք . արտասահմանի համար 22 ֆրանք . իսկ Ռուսաստանի համար 8 ռուպլի :

ԲՍԺԱՆՈՐԴԱԿԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է

Այս խոստովանելու գործադրութեանը սպասելով կար եւ յարատեւութիւն կը մալթենք մեր նոր պաշտօնակցին որուն հասցէն է

Տ . ԿՍՐԱՊԵՏ ԳԱԼՖԱՆԱՆ
(բաթ — ուսմանի)
(եզիգոսո) ԱՂԷՔԱՆԴՐԻԱ

Ա Ղ Ք Ա Տ Ա Ի Ն Ա Մ Ը

Ամսոյս 16-ին գումարուող ընդհանուր ժողովոյ մէջ կատարուած Գործ . Ժողովոյ ընտրութիւններ ըստ օրինի ամբողջացած չըլլալուն պատճառաւ , Դիւանան ներկայիս կուգայ թախանձողին խնդրել պատարարման անգամներէ որ ի սէր ազգաստաց բարեհաճին ներկայ գտնուիլ յառաջիկայ կիրակի (31 հոկտ .) գումարուած ընդհանուր ժողովին , ազգ . վարչութարանի մէջ կէսօրէ յետոյ ժամը 2-ին . ուր պիտի կատարուի Գործ . Ժողովոյ վերջնական ընտրութիւնը :

Այս չորրորդ հրաւերը ըլլալով , ներկայ գտնուող անգամայն թիւը ինչ որ ալ ըլլայ , ըստ կանոնագրի ընտրութիւնը պիտի կատարուի , որմէ յետոյ զիտողութիւնը անխելի կը լինան :

Դիւան Ընդհ . Ժողովոյ
Անենադպիր Խեղճապետ
Յ . ԳՈՒՐԱՊԷՔԱՆԱՆ
26 հոկտ . 1904
Վառնա

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԽԱՆՈՒՑՈՒՄԻ

Ձեռք հասկնալ ինչ կերպ թիւրամացութեամբ մը , չափեր մեզմէ տեղեկութիւններ կուգին թիւրթիւ վերջին սիւնակին մէջ ծանուցուած բուժիչ երկարամեքենայի մասին . Ուստի հարկադրուած ենք միանգամ ընդ միշտ յայտարարել թէ մենք այդ մեքենայի մասին մեզ զրկուած ծանուցումը պարունակութեան չափ միտն տեղեկութիւն ունինք , անմաքուր եւ է փորձ չենք կատարած անով . հետեւաբար հետաքրքրուողներ եւ անոր պէտք ունեցողներ չէ որ մեզ գիտնուին , այլ սա հասցէին որ յիշեալ ծանուցումին կցուած է

Տ . ԿԵՐԷՔԻ ՎԵՐՔԵԱՆ Եւ ընկ .
ժողով թոնգա թիւ 11 ՌՈՒՍՉՈՒԹ

ԱԶԳԱՅԻՆ

Հ . Յ . Դաշնակցականներու Պագուի Կ . Գալֆանան մէկ յայտարարութեան մէջ հետեւեալ տողերը կը կարդանք .

Ժամհարեանք եւ . Սեպտեմբր . պանդխտի ինչ յետոյ հետզհետէ յայտնուեցին եւ զիս շարունակ երեւանէն գալիս մի շարք բաղդախոյզներ եւ սրկաններ , որոնք օգոստոսի քաղելով հասարակութեան մէջ տեղաւորուած որոշ աշխատողութիւնից , սպանակաւ հիմուններ եւ պահանջներ են անուր յեղափոխութեան անունից անձնական գործերը կ'ըզի թերեւեալ համար

— Բաւական տարիներէ ի վեր Պրախլայի մէջ քահանայապետուող Արժ . Տէր Ստեփան քհն . Կիւլի . Եւան հրատարակ ըլլալով իր պաշտօնէն , կը փոխադրի Պուլխարիոյ կամ Ռուստիոյ հայ եկեղեցիներէ միտն մէջ պաշտօն ստանձնելու : Բանակցութեան համար պէտք է զիմել իրեն , որ զեւ Պրախլայ կը գտնուի :

— Պանդախտ հայ քահանայ մը եւս մեզ զիմելով խնդրած է ծանուցանել թէ ինք կը փոխադրի պաշտօն ստանձնել Ռուստիոյ կամ Պուլխարիոյ հայ եկեղեցիներէ միտն մէջ :

Դիմել քաղաքիս Տէր Մարտիրոս քհն . Մարտիրոսեանի հասցէին :

— Նատեմտ հայ գերատանական խումբը՝ որ քանի մը շաբաթէ ի վեր Ռուստիոյ կը գրտնուի եւ ջերմ ընդունելութիւն գտած է թատերասէրներուն կողմէ , որոշած է Վառնա վերադառնալ իւր միտնեայ պայմանաւ ժամը լրանալուն եւ նոյեմբեր 6-ին ձեռնադրին շրջանի իր առա-

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտաստուած ԲԱԶՄԱՎԷՊ հանդէսէ)

Նոյնպէս էջմիածնի Սինոդի Պրովորուր Սիւրբան Մատինեանցը բողոքել էր սերութեամբ Սինոդի անդամներ , բառասանի Հայոց Վերականգնող Կարապետ արքեպիսկոպոսի ու նորա գործակալար հոգեւորականներէ ապօրինութիւններէ վերայ : Պրովորուրի գանդատներն էլ կատարութիւնը պահել էր մինչեւ նորիտի կաթողիկոսի գալուստն , որ սա վերաբերի եւ արքեպիսկոպոսին ինչ որ արժան կը տեսնի : Փոխարքայ իշխան Վարանցովը բոլոր բողոքները իւր գրութեան հետ ուղարկեց կաթողիկոսին եւ խնդրեց վերահաստեմբելն եւ քննութիւն նշանակել : Ըստ վաղեմի սովորութեան էջմիածնի միաբանութեան կողմանէ նշանաւոր հոգեւորականներ պիտի գային թիֆլիս կաթողիկոսի գալուստը շնորհաւորելու : Երբ Սինոդը գրաւոր ղեկուցեց կաթողիկոսին եւ խնդրեց յայտնել , թէ ինքն որոնց կը բարհաճի ընդունել միաբանութեան կողմից պատգամաւոր կաթողիկոսը նշանակեց Յովհաննէս Եպիսկոպոս Շահաթեանցին , ծաղկաբար Սահակ Եպիսկոպոսին եւ Պետրոս Կարապետին , որ Տաճկաստանի

Հայոց պատգամաւորն էր Երեսէսի ընտրութեան միջոցին : Այս երեք անձինք եկան թիֆլիս Որովհետեւ Ներսէս ցանկանում էր վերջ տալ ժողովրդի գանգաւաններին Կարապետ արքեպիսկոպոսի եւ նորա գործակալար անձանց վերայ , փոխարքայի հաճութեամբ նշանակեց մի յանձնաժողով եւ յանձնեց նորան քննելու թէ պրովորուրի եւ թէ ժողովրդականների բողոքները կառավարութեան կողմից էլ ներկայացուցիչ էին նշանակուած գեներալ Ժեքեպով եւ քաղաքացիական մի քանի տատիճանաւոր , որի անուրն եւ սպանուեց չեմ յիշում : Յանձնաժողովի անդամներ էին նշանակուած Յովհաննէս Եպիսկոպոս Շահաթեանցին , Իոսէփ Եպիսկոպոս Մաղկարեան եւ Պետրոս Կարապետ Տաճկաստանցի : Իսկ քաղաքացիներին իշխան Յովհաննէս Զաքարեան Արքեպիսկոպոս (հարգատեղեւոր տաղանդաւոր զօրապետ իշխան Մովսէս Արքեպիսկոպոս) եւ անուանակալ ազա Դաւիթ Գրեգոր Խերովինեանց , ատենադպիր պաշտօնը կատարում էր ատենաւոր Յովհաննէս Միրաքեանց : Յանձնաժողովի գործունէութիւնը տեսեց 45 օր . բայց Ներսէսը միշտ ատենին խորհուրդ էր տալիս յանձնաժողովի անդամներին , որ Կարելի եղածին չափ պահպանեն հոգեւորական կոչման պատիւը , որպէսզի շատ չնսեմանայ ժողովրդի աչքում , սակայն յանձնաժողովը զիտարուած էր համակերպուել կաթողիկոսին խորհրդին , որովհետեւ շատ ծանր է-

ին ժողովրդական բողոքները առաջնորդի եւ նորա պաշտօնեաների վերայ : Յանձնաժողովի եղբայրացութիւնը այն եղաւ , որ թէ Եպիսկոպոսին , Կարապետին եւ թէ միւսներին պաշտօնանկ անեն . կաթողիկոսը չի համաձայնեց այդ եղբայրացութեան հետ . իսկ Սինոդի պրովորուր Մատինեանցի գանգաւանների նկատմամբ , ժողովը գտաւ , թէ նա շափաղանց ևսանդից մղուած իւր իրաւագութիւնից անցել է եւ միջամտել է հոգեւորական գործերին : Հայրապետը Կարապետ Եպիսկոպոսի մասին յանձնաժողովի վճռից տարբեր միջոց էր մտածել : Երբ որ ինքը 1846 թ . յունիսի 9-ին օծուեց կաթողիկոս , օծող Եպիսկոպոսներից մէկն էլ Կարապետ արքեպիսկոպոսն էր : Օծման հանգիսց յետոյ հայրապետը նորան հրաւեց իւր մօտ եւ անկեղծ բարեացակամութեամբ ասաց . «Կարապետ Հայր , ժողովրդի ազադակին վերջ տալու համար ես մտածել եմ կառավարութիւնից խնդրել որ ձեզ հաստատի Սինոդի նախագահ եւ ձեզ համար նաեւ Վեղարի խաչ պարգևի : Վրաստանի եւ Իմերէթի թեմի առաջնորդութիւնը էլ ձեզ վերայ թող մնայ , միայն Ձեր ստորագրեալ եկեղեցական եւ աշխարհական պաշտօնեաներին հետաքրքրէ եւ նորանց տեղերում նշանակեցէք բարեհամբաւ եւ վստահելի անձինք :

(Շարունակելի)

չին ներկայացուցած տուր տեղւոյս «Պուլկարիա» թատրոնին մէջ:

—Աղէքսանդրիւն ինչ ճարտարի արկածելոյն ի նպատակ արդարեւ հանգանակութեան արդիւնքը հասած է 44784 շրշ. ի:

—Տարօնի արկածելոյն համար Ամերիկայի այլ և այլ կողմերէն սկսած են նպատակներ շրշելը Ամերիկահայոց առաջնորդարանը:

ՏՐԳԳԱԹ

Անհամար խիթման 2 այ գաւառը օլմասը խիթման օլմասը էլան պորճարընը էօմէմէյն տպոնէլէրիմիզէ պու կիւնտէն էօթէ կաղէթ և կէօնտէրիմէյնէկէկի, վէ Նոյնմբեր 15 ինէ դատար էօմէմէյնէր իսէ իսիմէրի իլան օլմասնադը սօն տէֆա օլմասդ իթթար իտէրիզ:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Բուս Գորա տէնիզ տօնանմասըն Սթանպուլ պողաղընտան կէյմէնի իչիւն Պապը Ալիինին միւսատէ իթմէսինէ ինկիլթէրա գաթիկն մուխալիթ պուլընտըլընը Տէյլի Մէյլ եաղմըլ տըր:

—Շքօրատա Աւսարիա բօթա սընա թիւրք հիւքիւմէթի թաւաթընտան օլընան թէճալիւզաթտան տօլայըլ էլլի Պապը Ալի տէն թարգիյէ թալէպ իտէյօր:

—Էտիրնէ վտիսի իւզէրինէ սիւհա սըգան Իպրահիմին իսթիթադընտան անլաշըլտըլը իւզրէ, գօլըլըգտան թարտ օլընտըլը վէ մաաշլարը էօմէնմէտիկի սէպէպլէ վալիտէն ինթիւզամ արմագ իսթէմիշ: Պաշկա սէպէպլէր տախի շիւբհէ օլընըյօր, զիրա Իպրահիմին իւզէրինտէն իսայլը ալճէ չըգմըլ տըր: Խպրահիմ իքի կիւն վալիինին եօլըլը պէքէմիշ անը էօլտիւրմէք իչիւն:

Սուլթանըն իրատէսի իւզրէ, գօլընպաշր վէ սաիլլէր տախի թահգիլթաթ տլթընա ալընմըշլար: Հատիսէ էանաղընտա վալիինին նէգտիրտէ պուլընտպտէ եարէլէնմիշ օլան եալէր էօլմիւշ տիր:

—Սըրպ վօլլօտա Միչքօնըն էլինէ եէսիւր տիւշմիւշ օլան պուլկար մէհնուր վօլլօտա Տամիւն կուէզ սէրպէսթ պըրա գըլմըլ պուլտան սօնրադըրպլարը թէգըիդ իթմէմէք շարթը իլէ:

Միլքօ կուէզի էօլտիւրմէք նիյէթիւնտէ իմիշ իստէ, գրալ Բէթըրինին Սօֆիայա աղիմէթի էանաղընտա ուլկուսըլըգ վուգույա կէլիւր էնտիշէսի իլէ: Սըրպ հիւքիւմէթի վօլլօտայը գանտըրապիլմիշ տիր:

—Մանասթըր վիլայէթիւնտէ թիւրք ասքէրլէրի ըուս, սըրպ

վէ պուլկար շէթալարընը թաագիւ իթմէկէ պաշլամըշլար:

—Սըրպլար վէ պուլկարլար պէյնինտէ Մաքէթոնիտա վուգույա կէլէն հարէքիւթը խասիմանէլէրէ նիհայէթ վէրմէք իչիւն, Սօֆիայա վէ Պէլկրատա գօլիթա ըէյիսլէրի պէյնիլէրինտէ իթիլաթ հուսուլա կէթիւրմիշլէր:

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Ե

Բուս Գարատէնիզ տօնանմասը Սթանպուլ պողաղընտան կէյմէրէք, կիտուլ Պալթիկ տօնանմասը իլէ պիրլէշէճէկի Սթանպօլտան Վիէննայա պիւտիւրիւիշ տիր:

—Վլատիլօտօքտան պիր գաշ կիւն էվէլ չըգմըլ օլան պիր գարտանըն պէյանընա նաղարէն, մէքըիւր շէհր միւքէմմէլ գաւիլէշտիրիւիշ ճէպհանէ, լէվազիմաթ վէ մէքիւլաթ եիւքլէնմիշ վարօրլար տախի եէթիշմէքտէ իմիշլէր: քէօմիւր տէքօզիթի տախի տօլու ըմըլ, էկէր ճարօնլըլար Վլատիլօտօք մուհասէրէյէ ալըր իսէլէր, իքինճի պիր Բօրթ-Արթուրա թէսատիւթ իտէճէքլէր:

—Նախապիտէն իշար օլընտըլը իւզրէ, Բօրթ-Արթուրա վէ Մանչուրիայա ճարօն ասքէրլէրինէ տէվաթիւլլէր իմտատ եէթիշմէքտէ իմիշ: Բօրթ-Արթուրը իհաթէ իտէն ճարօն օրտուսընա 40,000 տաքէր իմտատ եէթիշմիշ:

Շիմտի անլաշըլըյօր քի սօն հիւճուլտա ճարօնլըլար 20000 քիշի թէլէֆիաթ վէրմիշլէր: Պու սէպէպլէ ճարօնլըլար հիւճուլտան սարֆը նաղարլէ, Բուսլարըն թէսլիւ օլմալարընա պէքլէմէք իչիւն գարար վէրմիշլէր: (պու չիւբհէլի)

—Բէթէրպուրի 26 հօկտ— Բօրթ-Արթուրըն մուհասէրէ ալթընտա պուլընմասը իսիւթընա օլարագ, շին սանտալլարը իլէ հէր տայիւմուհիմաթ նագլ օլընըյօր: ճարօնիտան վէ Գօրէտան տայիւմ իմտատ ասքէր եէթիշլէր: վէ հէր կիւն չիմալտա 600 էր եարէլի Տալիլիշ նագլ օլընըյօր:

—Պէրլինտէն իշար օլընտըլը իւզրէ, Պալթիկ տօնանմասընըն պիր գըսմը Սուէզ պողաղընտան կէյմիշ:

—Բուս «Պէրթէվիա Վէտօթթի» կաղէթասընա Մուքտէնտէն պիւտիւրիւիկ իւզրէ, գըշ պաշլամըլ վէ իւք գար տիւշմիւշ, Իքի տիւշման օրտուլարը պիրի պիրինտէն 800 մէթրօ վէ պաղը մահէլէրտէ 200 մէթրօ իրագ պուլընըլար ըմըլ: Մարէշալ Օեաֆայա սօն իքի հաթիթա դարֆընտա իպիր չօք իմտատ եէթիշմիշ էօյլէքի չիմտի Բուսլարտան

զիյատէ ասքէրի վար ըմըլ: Բուսլարըն եէտիւնտէ պուլընան Մամէքօն թէքէսիւն գարըլ օան Խուլբաօ թէքէսի ճարօնլըլարըն էլինտէ օլտըլընտան, Բուսլար հէր հալտէ պու մէվգըլը ալմագ էֆքեարընտա ըմըլար: շուհալտէ գաթի մուհարէպէ օ'նօգթաա վուգու պուլաճագ գանն օլընըյօր:

—Շանկատան Մօրնիկի Բօսրա պիւտիւրիւիկ իւզրէ, Շախայա եագըն պուլընան ըուս օրտուլընա տայիւմ իմտատ ասքէր եէթիշմէքտէ օլուպ, շիմտի մէքըլը օրտուլտա 300,000 տաքէր վէ 1200 թօր մէվճուտ ըմըլ:

ՄԻԹԵՆԵՎՎԻԷ

Աթինտան Վիէննայա իշար օլընտըլը իւզրէ, Կիրիտ սէր Գօմիսէրի Բրէնա Եօրկիւ Ստանըն Եօնանիտան իլէ պիրլէշմէսիւնէ Եօնան ասքէրինին տախի իշթիւրաք իթմէսինէ պաղը տէվլէթլէրին ըգաաընը ալմըլ:

—Մ. Ամերիկա ճուհարիյէթ Բէյլիսի Մ. Բուզլէլթ հօկտ 27 տէ թէքրար էքսէրիյէթի ալա իլէ ըգիւ ինթիլապ օլընմըլ տըր: Եանի ըագիլի Մ. Բարքըն իքի միալի զիյատէ ըգլ գապուլ իթմիշ տիր:

ՍՕՆ ԹԵԼԵԿՐԱՖԻ

Լօնտօն 29 հօկտ — 2իֆուտան Տէյլի մէյլէ իշար օլընտըլը իւզրէ, ճարօնլար պէօյիւկ ֆէտաքեարլըլէ պիր մէվգըլ գապթ իթմիշլէր քի, պու սայէտէ Բէլէնիկ նիւմ ճէգիրէնին շիմալընտա պուլընան գալէլէրին գապթը թէմին իթմիշ տիր:

Մուգտէն 29 հօկտ — Բուս թէլէկրաֆը իւզրէ, ճարօնլար Խուսիսօ նէհրին սօլ քէնարընտա իլէրլէմէյէ պաշլամըլար վէ էրիւրցի, էրթանցի վէ Բանսէնյան քէօյլէրի գապթ իթմիշլէր: Բուսլար ճարօնլարը կէրի սիւրմէքլէ եէնիտէն քէնտի մէվգըլարընը թուլմուշլար: Ամիւրալ Սքրիտուլ պու կիւն Մուգտէնէ եթիշտի:

Բէթէրպուրի 29 հօկտ — Ամիւրալ Ալէքսէվ պուլարա եէթիշուպ մէսէրթէթլէ գապուլ օլընտըլ:

Աթինա 29 հօկտ — Մաքէթոնիայա կիթմէք իչիւն պիր գաշ զապիթլէրին վէ միւլաղըլարըն իսթիլա իթմէմէլէրինէ հիւքիւմէթ շարըլմագտա տըր: Սինօրտան շէթալար կէյմէլէրին մէնն իթմէք իչիւն շէտիտ էմիրլէր վէլիւրի:

Թօքիօ 29 հօկտ — Շայէթա կէօրէ Բօրթ Արթուր գօմանտանը ժէնէրալ Շիթօնէլ միւլթարէ-

քէ թէքլիթ իթմիշ, ֆագաթ նէ մագսէտլէ պու թէքլիթի իթմիշ օլտըլը անլաշըլմայօր: Պուրատա զաննիյաթ շու տըրքի շէհրին ֆէհթ օլընմասընտան էվէլ Շիթօնէլ թէսլիւ օլընմագ իսթէսին:

—2իֆու 29 հօկտ — 2իւնիլէրին ըգլալէթիւնէ պինտէն, Իչան գալէսինին ալընմասը ճարօնլարա էհէմիյէթլէ թէլէֆիաթ վէրմիշ 22 վէ 24 տէ հիւճուլար կէրի սիւրիւմիւշլէր 24 տէ Իչան գալէսի տէրուինէ տիւշէտ պիր կիւրլէ լաղըլարըն գօնթօլընա մախսուս օլան մէքքէլի եագմըլ պու սէպէպլէ լաղըլըր տախի ալթէշալարագ, իսէտէկէրտէ բուստա պուլընան 6-700 ըուլար թէլէֆ օլմուշլար: ճարօնլար օնօգթատան իրագ պուլընմաղլէ թէլէֆիաթ վէրմէմիշլէր:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ,	հօկտ. 30
ՉԱՆԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վալիօն	54-60 լիպ. 9.90 / 11.90
Արապա	52-62 լիպ. 9 / 12 20
ԱՐՔԱ	
Վալիօն 100 քիւօ հին	10. — / 10.10
նոր	
Արապա 42-45 լիպ.	5.40 / 6.4
ԵՈՒԼԱՅարապա 33/36 լիպ.	4. 20/4. 40
Վալիօն 100 քիւօ	10.40/10.60
ՅԱՍՈՒԼԵՆ	100 քիւօ — 26.28
Արապա 100 քիւօ	25 — 29
ՏԱՐԸ	
արապա	հօգ
40102 արապա 55-60 լիպ.	9.90 / 11
Միսիւր	57-58 լիպ 7.60/8
ՉԱՎՏԱՐ	
արապա	7.90 — 8.10
«	վալիօն 7.60/8.
կիւնտէ 40 — 50	վալիօն վէ 50 — 60
արապա կէլմէքտէ	վալիօն մուլմէլէս
նաթօլէն 20 ֆր.	արապա մուլմէլէսի
նաթօլէն 20. 20	

ՍՐԱՐԱՅԻՑԷ

Նարոլէն 20, 20 ֆրանք
Օսմ. լիւրսը 22, 75 ալթուս ֆրանք

ՊԱՊԱԼԻՑԷ

Վարնա	ընցաղընտա պաղաղլէյէ
մալլէրին պու կիւնքի ֆիլալթը, ալթուս	
ֆրանք իլէ:	
ԳԱՂԷ	1,90/2
Շէֆէր նէմքէ	75
Շէֆէր [քէսմէ] սանտըգ	38.
Բիւրիւն Ֆիլիպէ չուվալը	47.
» ճարօն	38.
» Խնկիլիք	28
» Բիւլօն	50
ԿԱՂ. անտըլը	9. 50
2էթթիւն եաղը քիւօ	90.—1
ԳՈՒՐՈՒ Իւղիւմ	30

ՄԱՎԱՂԷՆ ՏԷ ԳԱԹՐ ՄԷՁՈՆ

Տ Օ Պ Ր Ի 2

Պուլտան էվէլ Լէվաթի ոօգաղընտա պուլընան մանիֆաթուրա վէ կալանթուրիա մաղաղամըլը պու տէֆա «Մարիտ Լուրգա» ոօգաղընտա 243 նօմէրօյա նագլ իթտիկիմիզի ըաղպէթլիւ միւլթէրիլէրիմիզի իւն իտէրիզ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՎՈՒՏԵԱՆ
ՎԷ ԷՎԼԱՍԼԱՐ

Одговорникъ А. Курбетянъ
печатница "Возможность" — Варна